ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2486-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Պապ Հայրապետյանի և Ժաննա Հունանյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց, 17 / 51 հասցեում կառուցված 7.94քմ մակերեսով հարթակը, 9.58քմ մակերեսով ծածկը և 37.4քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 17 / 51 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 27.06.2024թ. թիվ 1461-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 28.10.2024թ. պետական գրանցում ստացած 7.94քմ մակերեսով հարթակը՝ 1քմ՝ 3938 դրամ, 9.58քմ մակերեսով ծածկը՝ 1քմ՝ 3938դրամ և զբաղեցրած 37.4քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Պապ Հայրապետյանին և Ժաննա Հունանյանին:
2. Քաղ. Պապ Կոյբիշի Հայրապետյանի և Ժաննա Սպարտակի Հունանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2487-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 26.08.2024Թ. N 1875-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 26.08.2024թ. «Հացե տրամադրելու մասին» N 1875-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) «Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2488-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21.12.2023Թ. Ն 2070-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 21.12.2023թ. «Ինքնակամ կառուցված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N2070-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

2500

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2489-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 02.10.2023Թ. N 1459-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 02.10.2023թ. «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1459-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2490-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 02.10.2023Թ. N 1458-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 02.10.2023թ. «Ինքնակամ կառուցված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N 1458-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2491-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Մերուժան Հարությունյանի դիմումը՝ իր կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի արևելյան հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 24.16քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Մերուժան Ասատուրի Հարությունյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի արևելյան հատվածում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.16քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 22.54քմ/, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 24.16քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Մերուժան Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 24.16քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20239HDAEL/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 46 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2492-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սամվել Եղիազարյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Գագարին, Կոմիտասի փողոց թիվ 1 / 5 հասցեում կառուցված 29.10քմ մակերեսով ավտոտնակը, 29.10քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Կոմիտասի փողոց թիվ 1 / 5 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 18.04.2024թ. թիվ 876-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 30.10.2024թ. պետական գրանցում ստացած 29.10քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1209 դրամ, զբաղեցրած 29.10քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 1221դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Գագիկ Եղիազարյանին:
2. Քաղ. Գագիկ Սամվելի Եղիազարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2493-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Սևանի համայնքապետարանում քննելով Սեդրակ Ռազմիկի Միքաելյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի՝ ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայությունը 08.08.2024 թվականին քաղա. Սեդրակ Ռազմիկի Միքաելյանի նկատմամբ կազմել է արձանագրություն այն մասին, որ քաղաքացին առանց օրենքով սահմանված կարգի Սևանի թերակղզում՝ դեպի Սևանավանք բարձրացող աստիճանների աջ մասում ապօրինի տեղադրել է մետաղական ոչ հիմնական շինություն, որտեղ իրականացվում է ապրանքների մանրածախ առևտուր: Այդ փաստի առթիվ Սևանի համայնքապետարանում Սեդրակ Միքաելյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Քաղաքացի Սեդրակ Միքաելյանը հրավիրվել է Սևանի համայնքապետարան և տվել է բացատրություն: Ըստ այդ բացատրության՝ տվյալ ոչ հիմնական շինությունը տեղադրված է եղել 2018 թվականից: Սակայն հստակ չի պարզաբանվել՝ թե տաղավարը ում կողմից է տեղադրվել: Մի շարք կարևոր հանգամանքներ, ինչպես նաև իրավախախտում կատարած անձի ինքնությունը հայտնաբերելու նպատակով վարչական վարույթը սահմանված կարգով կասեցվել է: Կասեցման ընթացքում հայտնի է դարձել մի շատ կարևոր հանգամանք: Պարզվում է, որ 2024 թվականի հունվարի 16-ին ՀՀ վարչական դատարանը բավարարել է Սեդրակ Ռազմիկի Միքաելյանի հայցը ընդդեմ Սևանի համայնքապետարանի: Ըստ այդ դատական վճռի անվավեր է ճանաչվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 18-ի թիվ 635-Ա որոշումը՝ Սեդրակ Միքաելյանին վարչական տուգանքի ենթարկելու մասին: Մյուս կողմից, համաձայն «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի պահանջների՝ վարչական վարույթը կարճվում է, եթե գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած դատական ակտ: Բայց նյութերի քննության ընթացքում պարզվում է նաև, որ քաղաքացի Սեդրակ Միքաելյանը խախտել է ՀՀ կառավարության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշման պահանջները ոչ հիմնական շինություն տեղադրման մասին: Պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում այդ տաղավարի ապամոնտաժման անհրաժեշտության մասին Սևանի համայքապետարանին տեղեկացվել է ՀՀ Քաղաքաշինության տեսչական մարմնի կողմից: Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետի և 42-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել Սեդրակ Ռազմիկի Միքաելյանից՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում ապամոնտաժել Սևանավանք բարձրացող աստիճաններից աջ՝ 2018 թվականից տեղադրված ոչ հիմնական շինությունը, տարածքը բերել նախկին տեսքի և այն սահմանված կարգով հանձնել հողի սեփականատիրոջը:
2. Սույն որոշման պահանջը ինքնակամ չկատարելու դեպքում՝ հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2494-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սյուզաննա Գևորգյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Կարմիր բանակի փողոց թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2164521, տրված՝ 30.11.2004թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Կարմիր բանակի փողոց թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք.Սևան, Կարմիր բանակի փողոց, 46 շենք, 30 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2495-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 26.09.2024Թ. Ն 2130-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 26.09.2024թ. «Բնակելի նշանակության շինություններն ինքնակամ ճանաչելու մասին» 2130-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2496-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արմենակ Վարդանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 1 / 1, Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 1 / 2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝03062016-05-0025, 15092016-05-0005, / միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 1 / 1, Սևան համայնք ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 1 / 2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 1 / 1 ավտոտնակ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2497-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 2 / 6 հասցեում գտնվող 0.111876հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 28102024-05-0021/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց, թիվ 2 / 6 հասցեում գտնվող 0.111876հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.041547հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք.Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 2 / 6 հողամաս հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.070329հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել՝ Սևան համայնք, ք.Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 2 / 9 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2498-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 10.11.2023թ. N101-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 10-րդ կետի ա) ենթակետի և հիմք ընդունելով «Սոնիկ Մարգարյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Սոնիկ Մարգարյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան Ս. Սևանեցու փողոց թիվ 9 / 56 հասցե / տրամադրել 2024թ. 4-րդ եռամսյակի համար՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101396 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 11.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2499-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 23.09.2024Թ. Ν 2089-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 23.09.2024թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» Ν 2089-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «15.99416հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «1.69857հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2500-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Լավրենտի Գազարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 40ա / 11 հասցեում գտնվող բնակարանի /վկայական՝ 418340, տրված՝ 30.08.2004թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 40ա / 11 հասցեում գտնվող բնակարանի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց, 40 / 1 շենք, 11 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2501-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 09.08.2024Թ. N 1791-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 09.08.2024թ. «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N1791-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 08
ք.Սևան